Հաշվետվություն
2024 թվականի հոկտեմբերի 23-25-ը Մոլդովայի Հանրապետություն,
(Քիշնև) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Սուրեն Թովմասյան, Կադաստրի կոմիտեի ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Մոլդովայի Հանրապետություն, Քիշնև, 2024 թվականի հոկտեմբերի 23-25-ը

3. **Հրավիրող կողմը.**
   Մոլդովայի Հանրապետության գեոդեզիայի, քարտեզագրության և կադաստրի գործակալություն

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի և Մոլդովայի Հանրապետության գեոդեզիայի, քարտեզագրության և կադաստրի գործակալություն միջև մասնագիտական ոլորտի հարցեր քննարկելու, ինչպես նաև երկու գերատեսչությունների միջև փոխըմբռնման հուշագիր ստորագրելու նպատակով

5. **Քննարկված թեմաները.**
   Այցի շրջանակներում քննարկվեցին հետևյալ թեմաները.
   - անշարժ գույքի գնահատման գործունեության և առաջնահերթ նպատակների ներկայացում,
   - անշարժ գույքի զանգվածային գնահատման ոլորտում համագործակցություն և փորձի փոխանակում,
   - կադաստրի համակարգի ներկայացում,
   - անշարժ գույքի ռեգիստրի, թվային գործիքների, իրականացված ծրագրերի և կադաստրային ինժեներների (չափագրողների) հավաստագրման գործընթաց,
   - լավագույն փորձի և մարտահրավերների, SS համակարգի, կադաստրի ոլորտում արհեստական բանականության կիրառում,
   - գեոդեզիական ցանցերի և ազգային տեղորոշման համակարգերի փոխկապակցման, զարգացման և արդիականացման ոլորտում համագործակցության առաջնահերթ քայլերի սահմանում,
   - աշխարհագրական անվանումների ոլորտում Հայաստանի փորձը,

- աշխարհագրական անվանումների ռեգիստրի ստեղծման և իրականացման մեթոդներ ու գործելակերպ, ազգային ատլասի մշակում, խմբագրում և հրապարակման պրակտիկայի փոխանակում,
- գեոիդի մոդելի ոլորտում Մոլդովայի լավագույն փորձ,
- գեոպորտալ, տարածական տվյալների ենթակառուցվածք:

6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.

Կադաստրի կոմիտեի պատվիրակության այցը Մոլդովա տեղի ունեցավ գնահատման, գեոդեզիայի, կադաստրի և տարածական տվյալների ենթակառուցվածքների բնագավառում երկու պետությունների միջև երկկողմ համագործակցության համատեքստում: Քննարկումներին մասնակցում էին Մոլդովայի Հանրապետության գեոդեզիայի, քարտեզագրության և կադաստրի գործակալության, «Անշարժ գույքի կադաստր» պետական հիմնարկի, Գեոդեզիայի, տեխնիկական չափագրման և կադաստրի պետական ձեռնարկության ներկայացուցիչները: Այցի ընթացքում տեղի ունեցան չորս թեմատիկ աշխատաժողովներ, որոնց ընթացքում երկու պատվիրակությունները ներկայացրին լավագույն փորձը և հմտությունները կադաստրային և գեոդեզիական գործունեության հիմնական ոլորտներում: Անդրադարձ կատարվեց հետևյալ թեմաներին.

- Անշարժ գույքի գրանցում. քննարկվեցին կադաստրային գրառումների կառավարման և թարմացման համար օգտագործվող մեթոդներն ու ժամանակակից տեխնոլոգիաները, ինչպես նաև այդ գործընթացների թափանցիկությունն ու արդյունավետությունը բարելավելու ընթացակարգերը:
- Անշարժ գույքի գնահատում. հարկվող արժեքը որոշելու համար ներկայացվել են գույքի գնահատման մեթոդները, անշարժ գույքի շուկայի վերլուծության մեթոդաբանությունը, ներառյալ այս գործընթացի օպտիմալացման և ավտոմատացման գործիքակազմը:
- Քարտեզագրություն և աշխարհագրական անվանումներ. շեշտը դրվել է կադաստրային քարտեզների և քարտեզագրական արտադրանքի ստեղծման գործում թվայնացման և նորագույն տեխնոլոգիաների կիրառման, աշխարհատեղեկատվության մատչելիության ու ճշգրտության, ինչպես նաև աշխարհագրական անվանումների ստանդարտացման մեթոդների վրա:
- Քննարկվել են տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծման և ներդրման ուղիները, որոնք անհրաժեշտ են կատարելագործված որոշումների կայացման և կայուն զարգացման համար:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Այցի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել մոլդովական կողմի պատվիրակության այցը Հայաստան կազմակերպել 2025 թվականի ապրիլին, որի շրջանակներում պլանավորվել է մշակել և հաստատել երկու երկրների գերատեսչությունների միջև գործողությունների ծրագիր, և հետագա համագործակցությունը շարունակել ըստ գործողությունների պլանի:

Գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով՝ կողմերը պատրաստակամություն են հայտնել իրականացնել փորձի փոխանակում՝ տրամադրելով անհրաժեշտ մասնագիտական նյութեր:

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի և Մոլդովայի Հանրապետության գեոդեզիայի, քարտեզագրության և կադաստրի գործակալության միջև ստորագրվել է՝

- փոխըմբռնման հուշագիր, որով սահմանվում են համագործակցության ուղղությունները երկու գերատեսչությունների միջև
- հանդիպման արձանագրություն՝ երկօրյա աշխատանքային քննարկումների և ձեռք բերված պայմանավորվածությունների վերաբերյալ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Օրակարգի համաձայն մոլդովացի գործընկերներին ներկայացրել եմ Կադաստրի կոմիտեի մասին շնորհանդես՝ անդրադառնալով Կոմիտեի ստեղծման պատմությանը, կառուցվածքին, հիմնական նպատակներին, խնդիրներին, իրականացվող կառուցվածքային փոփոխություններին, Կադաստրի համակարգում ներդրված էլեկտրոնային ծառայությունների մատուցման, գրանցման ոլորտում իրականացվող բարեփոխումներին, ինչպես նաև կադաստրային արխիվների թվայնացմանը:

Բաց և կառուցողական քննարկումներից հետո պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակել համագործակցությունը՝ կազմակերպելով կանոնավոր հանդիպումներ, սեմինարներ և համատեղ աշխատաժողովներ:

9.Ստորագրությունը, ամսաթիվը:

Սուրեն Թովմասյան 28.10.2024 թ.

Հավելված N 2 ՀՀ վարչապետի N 326-Ն որոշման
Հավելված N 3 ՀՀ վարչապետի N 1230-Ն որոշման

Հաշվետվություն
Գործուղման ծախսերի վերջնահաշվարկի մասին

1 Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե

2 Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ Վարչապետի Որոշում N920-Ա 11.10.2024թ.

3 Անուն, Ազգանուն, զբաղեցրած պաշտոն ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյան
4 Գործուղման վայրը Մոլդովայի Հանրապետություն քաղաք Քիշնև
5 Գործուղման ժամկետները 23.10.2024-25.10.2024թթ.
6 Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը(Կադաստրի կոմիտեի 2024 թվականի (ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
1. ճանապարհածախս, 2. գիշերավարձ, 3. օրապահիկ
ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, ազգանուն	Ընդամենը (հազ. դրամ)
		Սուրեն Թովմասյան	
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը էկոնոմ դաս		
	Ավիածառայության արժեք (դրամ)	408,000	408.0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) Դոլար	75	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	29,060.25	29.06
	Օրերի քանակ	2	
	Ընդամենը (դրամ)	58,120.50	58.12
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) Դոլար	46	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	17,823.62	
	Օրերի քանակ	3	
	Ընդամենը (դրամ)	53,470.86	53.47
Ընդամենը ծախսեր (դրամ)			519.59

Գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյան

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ/
գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյան
28.10.2024թ.